# ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կումայրի» օրաթերթի հավելված

1991 թ. Մայիս, № 28: Գինը՝ 50 կոպ.





[illegible] Լենինականը... Լուսանկարը՝ Վ. [illegible]

### Հարգենք անմեղ զոհերի հիշատակը

Գուցե չգրվեր այս ռեպլիկը, եթե օրերս չհանդիպեինք տհաճ մի երևույթի, որը, անկասկած, վրդովմունք ու զայրույթ կպատճառեր ամեն մի կումայրեցու, առավել ևս՝ ահավոր երկրաշարժի զոհերի հարազատներին ու մերձավորներին: Աղբարկղի մոտ նկատեցինք «Հիշողություն» թերթի ճմռթված համարներից մեկը: Երևույթը, ինչ խոսք, եզակի է. անշուշտ՝ զգացմունքից զուրկ, անգիտակից մեկի ձեռքով կատարված: Սակայն այդ եզակին էլ մտորելու առիթ է տալիս:

Իհարկե, զարմանալի ոչինչ չկա, երբ օրվա լրագրերը ընթերցելուց հետո մարդիկ դրանք օգտագործում են զանազան կենցաղային նպատակների համար: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, ոչ միայն զարմանալի, այլև վրդովեցուցիչ է, երբ մի ոմն նպատակների համար օգտագործվում է նաև «Հիշողություն» շաբաթաթերթը, որը վաղը սերունդների համար «Հիշողության մատյան» է դառնալու:

Հարգելի համաքաղաքացիներ, «Հիշողությունը» մեր սրբությունն է, այն անաղարտ պահենք և հանձնենք սերունդներին, պատմությանը:

## «ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ»





Այս գիրքն անհնարին է գրախոսել: Այն, ինչ նրանում նկարագրված է, անհնարին է կարդալ առանց հոգեկան ծանր ապրումների, առանց դեղահաբերի, առանց արցունքների, որոնք, ցավոք, չեն հայտնվում աչքերում և չեն հանգստացնում մարմինը:

Հեղինակից՝ Ռոբերտ Կլեմենտից, ստանալով գիրքը, դրեցի աշխատասեղանիս՝ համոզված, որ պարտավոր եմ այն կարդալ և կարծիքս ուղարկել «Գրական թերթ»: Մեկ շաբաթ վախենում էի ձեռքս վերցնել այդ գիրքը, նախապես իմանալով, որ դեկտեմբերի 7-ի երկրաշարժին զոհ գնացած լենինականցի հազարավոր երեխաների ճակատագրի մասին է: Ռոբերտ Կլեմենտը երկար ժամանակով եղավ աղետի գոտում, գրի առավ հարյուրավոր բնակիչների պատմածները՝ հիմնական սյուժեն հյուսելով Լենինականի № 10 «Ֆրանսիական դպրոցի» 300 երեխաների ճակատագրի շուրջ: Այն, ինչ նկարագրված է գրքում, փաստական ճշմարտություն է և հայտնի է յուրաքանչյուր սպիտակցու, լենինականցու, կիրովականցու: Գիրքը ողջ հայ ժողովրդի վշտի ու գոյատևման մասին է:

Աշխարհում կատարվող այժմյան իրադարձությունները մոռացնել չեն տալիս Հայաստանի երկրաշարժը. Ռոբերտ Կլեմենտի գիրքը դրա վկայությունն է: Դրա հրատարակությունը մարդասիրության և զոհաբերության պատրաստակամության օրինակ է, որը համակրանքի է արժանի:

Մի քանի խոսք գրքի հեղինակի մասին: Ռոբերտ Կլեմենտը ծնվել է 1949-ին, ուսուցիչ է, զբաղվում է լրագրական գործունեությամբ: Նա մի շարք գրքերի, ռադիոսցենարների, հեռուստաբեմադրությունների հեղինակ է: Կլեմենտը հայտնի է որպես մարդու իրավունքների պաշտպանության ակտիվ մարտիկ: Ընդ որում, դա արտահայտվում է ոչ միայն նրա հրապարակախոսության մեջ, այլև կյանքում: Այսպես, 1989-ի մարտին նա Պրագայում ձերբակալվեց՝ քաղաքական իր բողոքն արտահայտելով այն ժամանակվա Չեխոսլովակիայի կոմունիստական կառավարության դեմ, իր գործընկեր, գրող Վացլավ Հավելի՝ ներկայիս պրեզիդենտի ձերբակալման առիթով:

«Լենինականի երեխաները» գիրքը 1991-ի փետրվարին, Վիեննայում լույս է ընծայել «Յուգենդ ունդ ֆոլկ» («Երիտասարդություն և ժողովուրդ») հրատարակչությունը:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

«Գր. թ.», 17 մայիսի 1991 թ.



Փրկարարները: Լուսանկարը՝ Հմ. Կարապետյանի



№ 20 դպրոցը աղետից հետո:

Լուսանկարը՝ Ա. Մակարյանի




Լուսանկարը՝ Կ. Կառոլի







# ՀԻՆԳԸ ՆՈՒՅՆ ԸՆՏԱՆԻՔԻՑ





Դեկտեմբերի 7-ի այդ դժոխային օրը Տիմիրյազև փողոցի № 39 շենքի 9-10 բնակարանում էինք 9 հոգի՝ 2 եղբայրներս, փոքր եղբորս կինը, նրանց փոքրիկ որդին, մայրս, 2 հորաքույրերս և իմ 2 աղջիկները: Մեծ եղբայրս տուն էր մտել երկրաշարժից մի քանի վայրկյան առաջ և չէր հասցրել նույնիսկ կախել վերարկուն, երբ սկսվել է ավերիչ ցնցումը:

Մայրս, մեծ աղջիկս (4 տարեկան) և հորաքույրներիցս մեկը եղել են բաց պատշգամբում: Ցնցումը փլվելուց 2-3 ժամ հետո նրանց հանել են կենդանի: Մյուսները մնացել են փլատակների տակ: Նրանց հանել, օգնել հնարավոր չի եղել:

5-րդ օրը կատարվեց հրաշք՝ փլատակների տակից ողջ հանեցին եղբորս տղային՝ Վոլոդիկին (1 տարեկան 2 ամսական)՝ մահացած մոր թևի վրայից: Մյուսներին հանեցին մինչև 11-րդ օրը: Վոլոդիկը 5 ամիս պառկեց Երևանի № 3 մանկական հիվանդանոցում: Բժիշկների մեծ ջանքերով հազիվ ոտքի կանգնեց, բայց դեռ բուժման կարիք ունի: Նրան պահում են վշտից ծերացած, անուժ դարձած ծնողներս, որոնց միակ մխիթարանքն է Վոլոդիկը, որ ստիպում է նրանց դիմանալ այդ ահավոր, անդառնալի կորստին և ապրել հանուն թոռնիկի:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԸ ծնվել է 1964 թվականի հուլիսի 18-ին: Սովորել է № 15 դպրոցում: 8-րդ դասարանից կրթությունը շարունակել է № 18 մասնագիտական-տեխնիկական ուսումնարանում և զուգահեռ աշխատել: Միշտ ուրախ, կատակասեր եղբորս աչքերում այդ վերջին շաբաթում տխրություն ու թախիծ էի տեսնում: Երբ նայում էի նրան, սիրտս ճմլվում էր ու ցավում անորոշ նախազգացումից:

Բոլորիս «շտապ օգնությունը» էր Հարությունը: Ոչ ոքի չէր մերժում իր օգնությունը: Եթե մեկին պետք էր, ինչ գնով էլ ուզում է լինի, հասնում էր: Բայց ոչ մեկս չկարողացանք հասնել և փրկել իմ 24-ամյա եղբորը, որին պատրաստվում էինք ամուսնացնել: Եղբորս ոչ մի երազանքը գոնե կիսով չափ չկատարվեց:

ՆՈՐԱՅՐ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ, ԳՅՈՒԼՆԱՐԱ ՄԿՈՅԱՆ: Սիրում էին միմյանց դպրոցական հասակից: Սովորում էին № 15 դպրոցում, ապրում նույն թաղամասում: Եղբորս բանակ ճանապարհելուց առաջ նրանց նշանեցինք: Իսկ հարսանիքը եղավ 1986 թվականին: Նորայրը ծնվել է դեկտեմբերի 4-ին, նրա ծնունդը, ամուսնությունը, մահը եղավ այդ մահաբեր ամսում: Նորիկը ավարտել է մայրաքաղաքի ֆիզկուլտուրայի տեխնիկումը և բասկետբոլի մարզիչ էր աշխատում: Այդ օրը առավոտյան վերջին անգամ սպասեց աշակերտների հետ:

Նուրբ, գեղեցիկ, բարի սիրտ ունեցող Գյուլնարան ավարտել էր պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղը և 1987 թվականին աշխատանքի անցել հղկող հաստոցների գործարանում: Մի քանի ամիս աշխատելուց հետո գնաց ֆիզարձակուրդ և չհասցրեց վերադառնալ աշխատավայրը: 1987 թվականի հոկտեմբերի 2-ին ծնվեց նրանց առաջին և վերջին որդին: Երազում էր երկրորդ զավակը աղջիկ ունենալ:

Երկրաշարժից մի շաբաթ առաջ ես հորս տանն էի, երբ մոտեցավ ինձ Նորիկը և ասաց. «Քույր, գիտես, իմ 23-ը լրացավ: Ես կմահանամ»: Ես ցնցվեցի, բայց ցույց չտվեցի և բարկացա նրա վրա: Սիրտը վկայել էր. 23-ը լրանալուց երեք օր անց վրա հասավ մեծ ողբերգությունը:

ԼԻԼԻԹ ԱՐՏՈՒՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ՝ իմ թռվռուն աղջնակը ընդամենը 2 գարուն ապրեց: Ծնվել էր 1986 թ. սեպտեմբերի 1-ին: Բոլորս նրա համար վառ ապագա էինք գուշակում: Շուտ խոսեց ու քայլեց: Շատ էր սիրում քեռիներին և ուզում էր միշտ գնալ «տատիկի տուն»: Լիլիթիս փոխարեն, 1990 թ. ծնվեց տղա երեխա, որին տվել եմ եղբորս՝ Հարությունի անունը: Շատ է նման փոքրիկ Լիլիթին և 2-ի կարոտն էլ փորձում եմ առնել նրանից:

ԹԱԳՈՒՀԻ ԱԲՐԱՀԱՄԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԸ հորաքույրս է: Ծնվել է 1929 թ.: Աշխատում էր էլեկտրատեխնիկական գործարանում: Արդեն թոշակի էր անցել: Ամբողջ կյանքը եղավ նվիրում: Երկրորդ մայր էր մեզ համար: Նրա ուրախությունը, ամեն րոպե եղբոր երեխաների հետ էր, սեփական երջանկությունը նրանց մեջ էր տեսնում: Երազում էր օր առաջ տեսնել Հարությունի ամուսնությունը: Նա այդպես էլ չբաժանվեց իր սիրելիներից և իմ փոքրիկ աղջիկն էլ շատ էր կապված նրա հետ: 5-ը գնացին անբաժան, թողնելով մեզ կողք-կողքի 5 հողաթմբեր, որոնք միշտ զարդարում ենք թարմ ծաղիկներով, կսկծալով ու մղկտալով:



«ԿՈՒՄԱՅՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ
ԿՈՒՄԱՅՐԻԻ ՔԱՂՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՄԱՅԻՍՅԱՆ Փ. 47
Պատվեր՝ 1376